ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

(Հայաստանում սովետական իշխանության հաստատման 45-ամյակի առթիվ)

Պրոֆ. Գ. Ա. ԳԱԼՈՅԱՆ

Հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրման պատմությունը ավելի քան վառ կերպով վկայում է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի ունեցած սկզբունքային նշանակությունը ճնշված ու հարստահարված ժողովուրդների կյանքում։

Իմպերիալիզմի և պրոլետարական ռևոլյուցիաների դարաշրջանում, երբ հայ իրականության մեջ ևս ուժեղացավ դասակարգային շերտավորումն ու սրվեց հակամարտությունը, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը չէր կարող դուրս մնալ դարաշրջանի պատմական խնդիրների բովանդակությունից։ Սոցիալ-դեմոկրատական շարժման առաջացումն ու Լենինի պարտիայի ստեղծումը նոր դարագլուխ բացեցին Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ազատագրական պայքարի մեջ։ Հայ ժողովրդի ազգային ազատագրման բախտը սերտորեն կապվեց Ռուսաստանի ռևոլյուցիոն բանվորական շարժման բախտի հետ։ Վերջինս միակ ուժն էր, որին ապավինած հայ աշխատավոր մասսաները կարող էին իրենց փրկության ուղու վրա կանգնել։

Վ. Ի. Լենինը դեռևս Հոկտեմբերյան ռևոլյուցիայից տարիներ առաջ գրտնում էր, որ ճնշված ազգերի, այդ թվում և հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները Ռուսաստանում կարող են հաղթանակով պսակվել, եթե սերտորեն կապվեն ռուս պրոլետարիատի ռևոլյուցիոն ազատագրական պայքարի հետ։ Սա միակ ճիշտ կողմնորոշումն էր, որ կարող էր մեր ժողովրդի ազատագրական պայքարը հաղթական վախճանի հասցնել։

Հայ ազգայնական պարտիաները, և ամենից առաջ դաշնակցությունը, չկանգնեցին և չէին կարող կանգնել մեր ժողովրդի ազգային ճակատագրի համար անհրաժեշտ այդ դիրքերում։ Նրանք չկարողացան մեր ազգային քաղաքականության նավը վարել այնպես, որ նա չջախջախվեր «տաճիկ բռնակալության Սցիլլայի ու ռուսական ցարիզմի Քարիբդայի» արանքում (Ֆ. Էնգելս)։ Դաշնակցությունը սեպ էր խրում հայ ժողովրդի ազատագրական պայքարի և պրոլետարիատի ռևոլյուցիոն դասակարգային պայքարի միջև։

Հայկական ջարդերը Թուրքիայում, հարյուր հազարավոր հայերի արտագաղթը, պատերազմի ավերածությունները, սովն ու համաճարակները արյունաքամ արին իր ֆիզիկական գոյության համար հաստատակամ մաքառող հայ ժողովրդին։ Թվում էր, թե երկրի երեսից իսպառ բնաջնջվում է հազարամյա մշակույթ ունեցող մի ժողովուրդ։

Դարեր շարունակ իր պետականությունը կորցրած հայ ժողովրդի լավագույն մտածողները միայն խորապես հասկացան լենինյան դրույթի պատմական նշանակությունը, նրանք մեծ ջանքեր գործադրեցին հայ ժողովրդի ազ-

գային-ազատագրական շարժումները Ռուսաստանի պրոլետարիատի ազատագրական պայքարին սերտորեն միակցելու համար, կանգնեցին հայ աշխատաժոր մասսաների գլուխ, որոնք պայքար էին մղում թե՛ օտար, և թե՛ հայ շահագործող վերնախավերի դեմ։

Ի. Լալայանցը, Բ. Կնունյանցը, Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը և շատ ու շատ ուրիշներ ոչ միայն որդեգրվեցին Լենինի ստեղծած պարտիային, այլև դարձան նրա ականավոր տեսական ու պրակտիկ գործիչներ։

Ինքնակալության տապալման և Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության գործում իր լուման ունի նաև հայ ժողովուրդը, որն իր ազգային և սոցիալական ազատագրման փրկարար ուղին գտավ Հոկտեմբերյան սոցիալիստական բոցերի մեջ։

Մեծ Հոկտեմբերս իր հաղթարշավի ամիսներն էր ապրում, երբ Վ. Ի. Լենինի գլխավորած Սովետական Ռուսաստանի կառավարությունը 1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունեց դեկրետ «Թուրքահայաստանի մասին»։ Սովետական Ռուսաստանը, իմպերիալիզմի ճնշման քաղաքականությանը հակադրելով հայ ժողովրդի լիակատար ազատագրման քաղաքականությունը, հայտարարում էր, որ «Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»։

Անդրկովկասում ստեղծված ներքին ու արտաքին ծանր պայմանները և, ամենից առաջ, թուրքական զավթիչների կողմից նշված տերիտորիաների զավթումն ու նրանց ներխուժումը Անդրկովկաս անհնար դարձրին պատմական այդ դեկրետի իրագործումը։

Թուրքական իմպերիալիզմը, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ, դաշինք կնքեց կովկասյան մենշևիկների հետ։ Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաները հանդես եկան բոլշևիկների դեմ, նրանց վարած քաղաքականությունը հեշտացրեց օտարերկրյա իմպերիալիստների և առաջին հերթին թուրքական զավթիչների առաջխաղացումը Անդրկովկաս[1]։

Թուրքական զորքերի առաջխաղացմանը Անդրկովկաս նպաստեց նաև այն հանգամանքը, որ երկրամասի հակասոցիալիստական իշխանությունները չճանաչեցին Բրեստի պայմանագիրը և դրանով իսկ ձևական իրավունք տվեցին գերմանա-թուրքական զավթիչներին շարունակել պատերազմական գործողությունները կովկասյան ճակատում։ «Գերմանիային և Թուրքիային,—ասել է Վ. Ի. Լենինը 1918 թ. մայիսի 14-ին,—որպես աջակից պետություն, հնարավոր է առաջ շարժվել ու առաջ շարժվել, ոչ մի բանի չպատասխանելով, ոչ մի բանի ուշադրություն չդարձնելով, հայտարարելով՝ մենք կվերցնենք այն, ինչ կկարողանանք վերցնել, մենք չենք խախտում Բրեստի հաշտությունը, որովհետև Անդրկովկասյան բանակը այն չի ճանաչում, որովհետև Կովկասը անկախ է»[2]։ 1918 թ. առաջին ամիսներին թուրքական զավթիչները օկուպացրին Հայաստանի տերիտորիայի մեծ մասը, սրի ու հրի քաշելով ոչ միայն տեղի, այլև թուրքական յաթաղանից փախած և Անդրկովկասում ապաստան գտած հայ շինականին։ Բա հայ ժողովրդի բնաջնջման համիդյան քաղաքականության շարունակությունն էր։ Փոխվում էին Թուրքիայի կառավարիչները, ան-

[1] Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 3, Երևան, 1958, էջ 109։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, Երևան, 1951, էջ 462։

փոփոխ էր մնում նրանց հայացինջ քաղաքականություն։ «Հայերը,—հայտարարել է Էնվեր փաշան 1918 թ. գարնանը,—եղել են և միշտ պետք է լինեն մեր թշնամիները ու հանգիստ չպետք է թողնեն մեր Անատոլիայի նահանգները, ավելի լավ է, որ հիմնապես բնաջնջվեն նրանք նաև Կովկասի մեջ, ինչպես բնաջնջվել են Թուրքիայի մեջ»։

1918 թ. Անդրկովկաս ներխուժած թուրքական բարբարոսների կարևորագույն խնդիրներից մեկը հենց այդ էր։ Հայ ժողովուրդը նորից կանգնեց ֆիզիկական բնաջնջման վտանգի առաջ։ Աշխարհը կրկին քար անտարբերությամբ նայեց հայ ժողովրդի նոր ողբերգությանը։

Միայն Սովետական Ռուսաստանն էր, որ գտնվելով քաղաքացիական պատերազմի ծանր պայմաններում, իր բողոքի ձայնը բարձրացրեց Գերմանիայի հովանու տակ կատարվող թուրքական նոր բարբարոսությունների դեմ։ «Թուրքական զորքերի և բրդերի առաջխաղացումը կովկասյան ճակատում,—ասվում էր Գերմանական կայսրությանն ուղղված Սովետական Ռուսաստանի 1918 թ. ապրիլի 18-ի բողոքի նոտայում,—ուղեկցվում է հայ ժողովրդի մասսայական բնաջնջմամբ։ Խաղաղ բնակչությունը, կանայք և երեխաները կոտորվում են հազարներով, նրանց գույքը թալանվում ու հրկիզվում է։ Այն պայմանագիրը, որ մենք ստիպված եղանք կնքել Բրեստում, Արդահանի, Կարսի և Բաթումի շրջանների բնակչության բախտը թողնում էր հենց իրեն՝ բնակչության կամքի դրսևորմանը։ Այն, ինչ կատարվում է այդ շրջաններում, վկայում է, որ հայ ժողովրդի բնաջնջման տասնյակ տարիներ կիրառվող քաղաքականությունը շարունակվում է նաև այժմ։ Թուրքական ռազմաճակատում գերակշռությունը Ռուսաստանի կողմն էր, որը ստիպված եղավ Արդահանը, Կարսը և Բաթումը տալ միայն այն պատճառով, որ Թուրքիայի դաշնակիցը Գերմանիան էր։

Պատասխանատվությունը այն սարսափների համար, որին ենթարկվում է հայկական բնակչությունը այժմ թուրքերի կողմից գրաված մարզերում, ընկնում է գերմանական կառավարության վրա, որի ուղղակի օգնությամբ Թուրքիան ձեռք է բերել այդ մարդերը»։[3]

ՌՍՖՍՌ Արտգործժողկոմասը համանման բողոքի նոտաներ ներկայացրեց նաև 1918 թ. սեպտեմբերի 10-ին և հոկտեմբերի 10-ին և ապա չեղյալ հայտարարեց Բրեստի պայմանագիրը։

1918 թ. գարնանը Հայաստանում իշխանության գլուխ անցան դաշնակցականները։ Նրանք պետական կառավարման լիակատար անընդունակություն հանդես բերեցին։ Դաշնակցության խոստացած «դրախտ» Հայաստանը վերածվեց սովի ու աղքատության, որբերի ու համաճարակների երկրի։ Դաշնակների իշխանության գլուխ անցնելը նշանավորվեց Բաթումում 1918 թ. հունիսին թուրքերի հետ կնքած պայմանագրով, որով «Հայաստանը» սահմանափակվում էր Երևանով և նրա շրջակայքով։

Ինչպե՞ս պատահեց, որ Թուրքիայի կառավարողները, չհասած իրենց հայացինջ քաղաքականության ավարտին, այնուամենայնիվ ստորագրեցին Բաթումի պայմանագիրը, որը խիստ ստորացուցիչ էր մեր ժողովրդի համար և որը, սակայն, թուրքերի կողմից «մեծ գիջում» էր դիտվում։

---

[3] «Документы внешней политики СССР», т. I, Москва, 1957, էջ 240—241։

1918 թ. գարնանը Ղարաքիլիսայի և Սարդարարատի հայ աշխատավորները մեծ ջարդ տվին հղփացած թուրքական օկուպանտներին։ Ղարաքիլիսան և Սարդարարատը ցույց տվեցին թուրքական անզուսպ ջարդարարներին, որ հայ ժողովրդի դիմադրական ոգին հաղթահարված չէ և իրենք չեն կարող Կովկասում հայերին բնաջնջել նույն հեշտությամբ, ինչ նրանց հաջողվեց անել բուն Թուրքիայում։

Բայց ոչ միայն այդ։ Փոխվել էին ժամանակները, փոխվել պայմանները։ Յուսիսում ծագած արշալույսի ցոլքերը այն ժամանակ անհաղթահարելի թրվացող պատնեշների միջով թափանցում էին Հայաստանի պարարտ հողը և վշտերի մշուշի տակ հույսերի ծիլեր էին ծնվում։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակը հավատ էր ներշնչում հայ ժողովրդին նրա ազատագրական պայքարում, բարձրացնում նրա դիմադրական ոգին։

Իսկ թուրք կառավարողնե՞րը։ Նրանք նոր դավ էին լարում հայ ժողովրդի դեմ։ «Բթթիհատ վը թերաքքը»-ի պարագլուխները դաշնակցությանը բաշխած «անկախությամբ» փորձում էին գոհացում տալ միջազգային հասարակական կարծիքին, լուծված համարել հայկական հարցը և հայ դատը հանելով միջազգային դիվանագիտական ոլորտներից, այն դարձնել զուտ հայ-թուրքական հարաբերությունների հարց։ Այդ են վկայում թուրքական գործիչների տասնյակ անգամ արված հայտարարությունները, թե «հայկական հարցը արդեն վերջնականապես լուծված է հայկական հանրապետության ստեղծումով»։ Մի լուծում, որը հնարավորություն պետք է տար նրանց Հայաստանը անջատել Ռուսաստանից և անդրկովկասյան մյուս ժողովուրդներից, տնտեսական ու քաղաքական կախման մեջ գցել Թուրքիայից և մի հարմար առիթով հասնել հայկական հարցի վերջնական լուծմանը՝ թուրքական վարիանտով։

Բայց օտար նվաճողների և երկրամասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների քաղաքականությունը դեմ էր առնում բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն պայքարին, որը հսկայական ալիքի էր վերածվել Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ազդեցության տակ։

Անդրկովկասում 1918—20 թթ. բուրժուա-նացիոնալիստական պարտիաների տիրապետության տարիներին լուրջ հարված հասցվեց մեր ժողովուրդների տրադիցիոն ինտերնացիոնալ բարեկամությանը։ Բայց, չնայած դրան, երկրամասի բոլշևիկյան կազմակերպություններին հաջողվեց Վ. Ի. Լենինի գլխավորած պարտիայի ղեկավարությամբ հաղթահարել շովինիզմի մղձավանջը և հայ, վրացի, ադրբեջանցի ու մյուս ազգությունների աշխատավորներին համախմբել մեկ ընդհանուր բանակի մեջ։ Անդրկովկասի ժողովուրդների ինտերնացիոնալ համախմբման խորհրդանիշը հանդիսացավ Բաքվի հերոսական Կոմունան։

Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի 1920 թ. ստեղծված կոմունիստական պարտիաների ղեկավարությամբ երկրամասի բանվորները ձեռք-ձեռքի տված պայքարեցին իրենց սոցիալական ու ազգային ազատագրության համար։ Այդ պայքարում մեր ժողովուրդներին անշահախնդիր եղբայրական օգնություն ցույց տվեցին Սովետական Ռուսաստանի աշխատավորները։

Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը Անդրկովկասում բխում էր մեր ժողովուրդների ազգային շահերից, սոցիալիստական ռևոլյուցիայի շահերից։ Դրան չէր հակասում նաև Քեմալական Թուրքիայի նկատմամբ Սովետական Ռուսաստանի ունեցած դիրքը։

Քեմալ փաշայի իշխանության գլուխ անցնելուց ի վեր, թուրքական նացիոնալիստների դեմոկրատական տարրը՝ Քեմալի գլխավորությամբ, իր երկրին սպառնացող իմպերիալիստական վտանգից պաշտպանվելու համար Սովետական Ռուսաստանի հետ համերաշխության ձգտում հանդես բերեց։ Սովետական Ռուսաստանը ընդառաջ գնաց և օգնության ձեռք մեկնեց Թուրքիային՝ իմպերիալիզմի և թուրքական սուլթանի առավել ռեակցիոն լուծը թոթափելու համար։ Սա էր սովետա-թուրքական բարեկամությունը պայմանավորող լծակը։ Բացահայտելով քեմալականների նկատմամբ Սովետական Ռուսաստանի կառավարության քաղաքականության էությունը, Չիչերինը 1920 թ. սեպտեմբերի 14-ին գրել է Լենինին. «Բարեկամական քաղաքականությունը քեմալականների նկատմամբ մեզ համար խիստ կարևոր ենք համարում։ Նրանք մուսուլմանականության մեջ հանդիսանում են առաջադիմական և դեմոկրատական էլեմենտ, նրանց կործանումը կարող է, թեկուզ և ժամանակավորապես, հանգեցնել ամենառեակցիոն պանիսլամիզմի և ֆանատիզմի զարգացմանը՝ ուղղված ռևոլյուցիայի և մեր դեմ»[4]։

Պանիսլամիզմի և մուսուլմանական ֆանատիզմի հաղթանակը կարող էր իրոք ավելի աղետալի նշանակություն ունենալ նաև հայ ժողովրդի և հատկապես թուրքահայերի հրաշքով կենդանի մնացած բեկորների համար։

Սովետական Ռուսաստանի կառավարությունը բազմիցս հայտարարել է, որ, Թուրքիայի հետ բարեկամական քաղաքականություն վարելով, Սովետական Ռուսաստանը ելնում էր նաև այն բանից, որ քեմալականները հավատարիմ կմնան իրենց հռչակած սկզբունքներին, մասնավորապես ժողովուրդների ինքնորոշման և Թուրքահայաստանում թուրքահայերի համար բավարար տերիտորիաներին անկախություն տալու սկզբունքին։ Բայց, ինչպես կյանքը ցույց տվեց, թուրքական նոր կառավարության մեջ ազդեցիկ ուժ ներկայացնող նացիոնալիստները հայկական հարցում ժառանգել էին հին Թուրքիայի քաղաքականությունը և հավատարիմ էին մնացել սուլթան Համիդի սկզբունքներին։

Թուրքական կառավարողները բացահայտորեն թեքվեցին աջ, սկսեցին սիրաշահել Անտանտին, իրենց նվաճողական քաղաքականությունն իրականացնելու համար։ Թուրքական զորքերը 1920 թ. աշնանը նորից ներխուժեցին Հայաստան, նպատակ ունենալով գրավել ոչ միայն Հայաստանը, այլև ամբողջ Անդրկովկասը և ամենից առաջ Սովետական Ադրբեջանը։ Վ. Ի. Լենինը միանգամայն ճիշտ գնահատեց թուրքական կառավարողների քաղաքականությունը, այն կապելով Անտանտի իմպերիալիստական-հակասովետական քաղաքականության հետ։

1920 թ. հոկտեմբերի 9-ին պարտիայի Մոսկվայի կազմակերպության ակտիվի խորհրդակցությունում տված զեկուցման մեջ Վ. Ի. Լենինը նշեց. «Վերջերս թուրքերը հարձակում են սկսել Հայաստանի վրա, նպատակ ունենալով գրավել Բաքումը, իսկ հետո կարող է և Բաքուն։ Հասկանալի է, որ մենք այդ հարցում պետք է հանդես բերենք մաքսիմում զգուշություն»[5]։ Հենց այդ օրերին Ռ. Կ. Օրջոնիկիձեն հաղորդում էր Վ. Ի. Լենինին, որ թուրքական նացիոնալիստները՝ Էնվեր փաշան և Բեքիր Սամի-բեյը լեռնականների մեջ ապատանք են տանում, այսպես կոչված, անկախ Լեռնական ռեսպուբլիկա ստ-

[4] ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 64, оп. 2, ед. хр. 11, л. 154.
[5] «Ленинский сборник», XXXVI, Москва, 1959, էջ 131։

տեղծելու օգտին։ Իսկ երբ Բեքիր Սամի-բեյը մոսկովյան բանակցություններից հետո վերադարձավ Անկարա, նա բացահայտ աշխատանք էր տանում կառավարության մեջ՝ իմպերիալիստական պետություններին մերձենալու ուղղությամբ։

Ելնելով Լենինի ցուցումներից, Գ. Չիչերինը հոկտեմբերի 14-ի № 305 հեռագրով դիրեկտիվ էր տալիս Ռ. Լեզրանին՝ խիստ զգույշ լինել քեմալականների, ինչպես նաև հայերի հետ ունեցած հարաբերություններում։

Չիչերինը, խիստ վտանգավոր համարելով քեմալականների ռազմական գործողությունները, առաջարկում էր Լեզրանին սիստեմատիկորեն խաղաղ քաղաքականություն անցկացնել, որպեսզի Անդրկովկասում լուրջ ճգնաժամ չառաջանա, որպեսզի Անտանտը Սովետական Ռուսաստանին չներգրավի պատերազմի մեջ։ Պատերազմի ցանկալի ելքի դեպքում Անտանտի իմպերիալիստները մտադիր էին օգտագործել առիթը և Հայաստանը պաշտպանելու պատրվակով զորքեր մտցնել այնտեղ։

1920 թ. դեկտեմբերի 21-ին սովետների 8-րդ համագումարի ՌԿ(բ)Պ ֆրակցիայի նիստում Լենինը հայտարարեց, որ «Թուրքական հարձակումը մեր դեմ էր ուղղված։ Անտանտը մեզ համար փոս էր փորում և ինքն էլ ընկավ այնտեղ, որովհետև մենք ձեռք բերեցինք Սովետական Հայաստան։

Թուրքիան ղեկավարում են կադետները, օկտյաբրիստները, նացիոնալիստները, որոնք պատրաստ են մեզ Անտանտին ծախել»[6]։

Սա է Լենինի տված գնահատականը Քեմալի կառավարության վարած քաղաքականությանը։ Չի կարելի շփոթել Քեմալի և նրա ղեկավարած կառավարության քաղաքականությանը Լենինի տված գնահատականը այն անկեղծ ձգտման հետ, որ հանդես էր բերում Վ. Ի. Լենինը Թուրքիայի հետ հարաբերությունները բարելավելու ուղղությամբ։

Մի քանի խոսք 1920 թ. հայ-թուրքական պատերազմի մասին։ Սևրի պայմանագիրը խիստ անհանգստություն էր առաջ բերել թուրքերի մոտ։ Անտանտի իմպերիալիստները դրանով ճնշում էին գործադրում Թուրքիայի վրա, խոստանալով վերանայել այդ պայմանագիրը, եթե Թուրքիան հանդես գա Սովետական Ռուսաստանի դեմ։ Թուրքական ազգայնամոլները, արտաքին գործերի մինիստր Բեքիր Սամի-բեյի գլխավորությամբ, աշխատում էին օգտագործել 1920 թ. սովետա-թուրքական բանակցությունները՝ Անտանտի իմպերիալիստներից զիջումներ ստանալու համար։ Նրանք իրենք էլ շատ լավ էին հասկանում, որ ռազմական տեսակետից խիստ թույլ դաշնակցական Հայաստանը չէր կարող ոեալ վտանգ սպառնալ Թուրքիայի ազգային-ազատագրական շարժմանը։ Բայց Անդրկովկասում իրենց նոր ագրեսիան արդարացնելու համար նրանք մեծ աղմուկ էին բարձրացրել հայկական վտանգի մասին։ Խորամանկ քաղաքականություն էին վարում թուրքական ռեակցիոնները։ Իրենց ագրեսիվ քաղաքականությունը քողարկելով Անտանտի դաշնակից դաշնակցական Հայաստանի դեմ պայքարելու անհրաժեշտությամբ, նրանք միաժամանակ ամեն կերպ օգտագործում էին Անտանտի հակասովետական քաղաքականությունը, իրենց նոր ավանտյուրայում նրանց պաշտպանությունն ստանալու համար։

---

6 «Коммунист», 1963, № 6, էջ 8։

Նախ պետք է նշել, որ սխալ է այն կարծիքը, թե 1920 թ. աշնան թուրքական հարձակումը Հայաստանի վրա ուղղված էր իմպերիալիզմի և հատկապես Սևրի պայմանագրի դեմ։ Ինքը՝ Քեմալ փաշան է խոստովանում, որ դեռևս 1920 թ. մայիսի վերջերին, այսինքն Սևրի պայմանագրի կնքումից դեռ շատ առաջ, իրենք որոշում էին ընդունել հարձակվել Հայաստանի վրա և Կարաբեքիր փաշային նշանակել էին Արևելյան ռազմաճակատի հրամանատար։ Երբ Սովետական Ռուսաստանի կառավարությանը հայտնի դարձավ այս փաստը, նա, ինչպես այդ մասին հիշատակվում է Սովետական Ռուսաստանի կառավարության՝ դաշնակցական կառավարությանը 1920 թ. հուլիսի 19-ին ուղարկած նոտայում, անմիջապես դիմեց Թուրքիայի կառավարությանը, պահանջելով դադարեցնել զորակոչը։ Միայն Սովետական Ռուսաստանի ճնշման տակ Թուրքիան ստիպված եղավ ժամանակավորապես հետաձգել իր հարձակումը Հայաստանի վրա։ Եվ ահա հենց այս ժամանակ էր, որ դաշնակցական կառավարությունը, փոխանակ օգտվելու Սովետական Ռուսաստանի կողմից առաջարկված օգնությունից, գերադասեց ապավինել Անտանտին, ամեն կերպ խանգարել Սովետական Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավմանը, որով և Անտանտի պրովոկացիաների զոհը դարձավ։ Դաշնակցականները ժլատ չգտնվեցին թուրքական պրովոկացիաների համար առիթներ տալու գործում, Անտանտի հրահրանքով նրանք ուղղակի պատերազմի էին ձգտում։ Սովետական Ռուսաստանը արմատապես շահագրգռված էր Կովկասում խաղաղության պաշտպանությամբ։ Երկրի ներքին և արտաքին պայմանները այդ էին թելադրում։ Իսկ Անտանտը ։ Վերջինս շահագրգռված էր Անդրկովկասում քաղաքական դրությունը բարդացնելու մեջ։ Նա նպատակ ուներ իր կողմից հրահրվող հայ-թուրքական պատերազմը վերածելու սովետա-թուրքական պատերազմի, դրանով իսկ զինված ինտերվենցիայի նոր ռազմաճակատ բացելով Սովետական Ռուսաստանի դեմ՝ Կովկասում։

Հայտնի է պատմությունից, որ արևմտյան տերությունները հայկական հարցը միշտ էլ օգտագործել են Թուրքիայի վրա ճնշում գործ դնելու համար և հենց որ ստացել են պահանջվող զիջումը, շատ արագ մոռացել են հայկական հարցի գոյությունը։ Այդպես եղավ, օրինակ, 1878 թ. և հետագա տարիներին 1920 թ. ամռանը նորից ասպարեզ հանվեց այդ քաղաքականությունը։ Երբ Սովետական Ռուսաստանի ճնշման տակ Թուրքիան 1920 թ. գարնանը ստիպված եղավ ձեռնպահ մնալ Հայաստանի վրա կատարվող հարձակումից, Անտանտի իմպերիալիստները ամեն կերպ աշխատեցին այլ ճանապարհներով հասնել իրենց նպատակներին։ Նրանք մի կողմից սիրաշահում էին Թուրքիային, մյուս կողմից՝ կնքում Սևրի պայմանագիրը, որով հայկական տերիտորիաների մի զգալի մասը խոստանում էին տալ Հայաստանին։ Թևավորված Սևրի պայմանագրով, դաշնակցությունն սկսեց որպես մի թղթի կտոր դիտել օգոստոսի 10-ին Սովետական Ռուսաստանի հետ կնքած համաձայնագիրը։ Դաշնակցականները նորից խաբվեցին. նրանք չհասկացան, որ ինչպիսի իրադրություն էլ ստեղծվեր, միևնույն է, Սևրի պայմանագրով նախատեսված հողերը չէին տրվելու Հայաստանին, որ դա դիվանագիտական մի խորամանկ խաղ էր, որի նպատակն էր դաշնակցական Հայաստանը դարձնել իմպերիալիստների համար հուսալի հակասովետական պլացդարմ, իսկ թուրքերին գրգռել Հայաստանի դեմ։ Եվ որովհետև Թուրքիայի ներխուժումը Անդրկովկաս չէր կարող չունենալ հակասովետական ուղղություն, ապա այն, Անտանտի հա-

չիվներով, պետք է առաջ բերեր ռազմական նոր կոնֆլիկտ Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև և Թուրքիան զցեր Անտանտի գիրկը։ Սա էր Սևրի պայմանագրի չգրված հոդվածների բովանդակությունը, որը հասկանալու ընդունակություն չկարողացան հանգես բերել հայ «ազգային ջոջերը»։

Եվ այսպես, խաբված Հայաստանը նորից ներքաշվեց ավերիչ պատերազմի մեջ։ Թուրքական կառավարության ռեակցիոն կլիկը, հանձինս Բեքիր Սամիի, Կարաբեքիրի, Յուսուֆ Քեմալի և մյուսների, նորից ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականության կենսագործմանը։

Թուրքական արշավանքը նոր ահավոր սարսափներ բերեց վիրավոր հայ ժողովրդին։ Միայն 1920 թ. ընթացքում Թուրքիայի կողմից օկուպացված տերիտորիաներում ոչ լրիվ տվյալներով սպանվել է 30 հազար տղամարդ, 25 հազար կին ու աղջիկ, 5 հազար երեխա, վիրավորվածների ընդհանուր թիվը հասնում էր մոտ 60 հազար մարդու։ Թուրքական բարբարոսները առևանգեցին ավելի քան 50 հազար կին ու աղջիկ, գերության քշեցին հազարավոր աշխատունակ տղամարդկանց։ Այս հաշվի մեջ չեն մտնում սովի և համաճարակի հետևանքով մահացածները։ Թուրքական այս արշավանքի հետևանքով հրի ու սրի քաշվեցին ավելի քան 200 հազար հայեր։ Եվ միթե սա Թուրքիայի հայաջինջ քաղաքականության շարունակությունը չէր, և միթե 1915 թ. ավարտվեց հայկական եղեռնը։ Ո՛չ, իհարկե։ Այսպես մտածողները ճիշտ չեն գնահատում Թուրքիայի քաղաքականությունը Անդրկովկասում և ըստ էության թերագնահատում են Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սովետական իշխանության սկզբունքային նշանակությունը հայ ժողովրդի ճակատագրում։

Անցյալ դարի 70-ական թթ. ծրագրված և 90-ական թթ. սկսված հայկական մասսայական ջարդերը շարունակվեցին մինչև 1921 թ. սկզբները և եթե չլիներ Սովետական Ռուսաստանը, հարց է, թե այս ահավոր աշխարհի ահավոր անտարբերության պայմաններում Թուրքական նացիոնալիստները կդադարեցնե՞ն հայերի բնաջնջումը թե ոչ։

1920 թ. աշնան օրհասական օրերին միայն Սովետական Ռուսաստանն էր, որ իր փրկարար ձեռքը մեկնեց հայ ժողովրդին։ Վ. Ի. Լենինի անմիջական ցուցումներով սովետական կառավարությունը իր լիազոր ներկայացուցչին ուղարկեց Հայաստան, և երբ Թուրքական զորքերն անկաշկանդ շարժվում էին առաջ իրենց հետ բերելով մահ ու ավերածություններ, իսկ հայերի դարավոր «պաշտպանները»՝ Անտանտի և ԱՄՆ-ի իմպերիալիստները ոչ միայն բացահայտ հրաժարվեցին Հայաստանին օգնություն կազմակերպելուց, այլև բորբոքում էին այդ պատերազմը, Լենինի գլխավորած սովետական կառավարությունն էր, որ հանդես եկավ առաջարկությամբ՝ օգնել հայ ժողովրդին թուրքական առաջխաղացումը կասեցնելու, հայ ժողովրդին կործանումից փրկելու համար։

Փորձից խրատված, կոտորածներից խոշտանգված և պատերազմներից արյունաքամ եղած հայ աշխատավոր մասսաները կրկին համոզվեցին, որ իրենք ոչինչ չունեն սպասելու ո՛չ Անտանտի իմպերիալիստներից և ո՛չ էլ նրանց կամակատար դաշնակցությունից։ Պարզից էլ պարզ էր, որ հայ ժողովրդի փրկության միակ ելքը երկրում սովետական իշխանության հաղթանակը կարող էր լինել, ռուս մեծ ժողովրդի հետ դաշինքի ամրապնդումը։ 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաղթեց սովետական իշխանությունը։ Ապրստամբ մասսաների խնդրանքով նրանց օգնության եկան հերոսական 11-րդ բանակի քաջարի մարտիկները։ Մեծ Հոկտեմբերի արևը ծագեց հայոց լեռնաշ-

խարհի վրա։ Հայ ժողովրդի պատմության մեջ բացվեց նոր դարագլուխ։ Վ. Ի. Լենինը Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ Ս. Կասյանին ուղարկած հեռագրում անհուն բերկրանքով ողջունեց իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Հայաստանը։

Հարկ է նշել, որ Անդրկովկասում այդ ժամանակ ստեղծված ներքին և միջազգային դրությունը պայմանավորեց Սովետական Հայաստանի արտաքին քաղաքական հարցերի լուծումը։ Այդ հարցերը միանգամայն այլ լուծում կարող էին ստանալ, եթե 1920 թ. ծագած մայիսյան ապստամբությունը հաղթանակով պսակվեր։ Հայտնի է, որ Հայաստանի ռևոլյուցիոն կոմիտեն 1920 թ. մայիսի 10-ին տապալված հայտարարեց դաշնակցական կառավարությունը և Երկրում հռչակեց սովետական իշխանություն։ Ինչպես երկրի ներքին, այնպես էլ արտաքին պայմանները աներկբա նախադրյալներ էին ստեղծել Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի համար։ Աշխատավորների իշխանության նկատմամբ դասակարգային ատելություն տածող դաշնակցությունը, օտարերկրյա իմպերիալիստների օգնությամբ, վայրենի կատաղությամբ ճնշեց ապստամբությունը։ Դաշնակցականները չկարողացան հասկանալ պատմական զարգացման տենդենցը և մեր ժողովրդի ազգային շահերը զոհաբերեցին իրենց իշխանական կրքերին, Հայաստանը դարձրին դիվանագիտական կոմբինացիաների առարկա։

Սովետական իշխանության հաղթանակից հետո Հայաստանի կոմունիստական պարտիայի առջև կանգնեց ավելի բարդ ու պատասխանատու խնդիր՝ երկրի օկուպացված տերիտորիաների ազատագրման, քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնման և սովետական իշխանության ամրապնդման խնդիրը։

Ծանր, շատ ծանր, թանկ գնով Հայաստանի աշխատավորները կկարողանային իրագործել այդ բարդ խնդիրը, եթե դարձյալ մեզ օգնության ձեռք չրմեկներ ռուս մեծ ժողովուրդը։

Սովետական Ռուսաստանը մեծ ջանքեր գործադրեց թուրքական օկուպանտներին Հայաստանի տերիտորիայից դուրս վռնդելու, ինչպես նաև Զանգեզուրը դաշնակցականներից ազատագրելու գործում։

Հայտնի է, որ մինչև սովետական իշխանության հաստատումը Հայաստանում թուրքական նացիոնալիստները հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը փորձում էին քողարկել դաշնակցության դեմ մղվող պայքարով։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո թուրքական կառավարողները հնարավորություն չունեին սքողելու իրենց հայաջինջ քաղաքականությունը և բացահայտ պատրաստվում էին նորից վերսկսել պատերազմական գործողությունները։ Ինչպես նշվում էր Սովետական Հայաստանի Արտգործժողկոմի 1921 թ. հունվարի 19-ի՝ Խուրքական կառավարությանը ուղղված նոտայում, թուրքական օկուպացիոն զորամասերը սիստեմատիկաբար կատարում էին բռնություններ, թալան ու աշխատավոր խաղաղ ժողովրդի սպանություններ ոչ միայն Ալեքսանդրապոլում, այլև Կարսում և օկուպացված մյուս բոլոր վայրերում։ Այն վայրը, ուր մուտք էր գործում թուրքական զինվորը, բառիս բուն իմաստով վեր էր ածվում ավերակների կույտի։ Թալանելով ժողովրդի ամբողջ ունեցվածքը, օկուպանտները գերում և ստրկության էին տանում աշխատունակ բոլոր տղամարդկանց։ «18-ից մինչև 50 տարեկան ամբողջ աշխատունակ արական բնակչությանը քշել են,—ասվում է վերը նշված նոտա-

յում,—նրանց հագուստները խիլ և դրանց փոխարեն պարկերից կարված հագուստներ են տվել։ Օտարության քշված այդ բոլոր մարդիկ հարկադիր աշխատանքի են ուղարկվել...

Կարսում, թուրքական զորքերի կողմից քաղաքի գրավումից հետո առաջին երեք օրերի ընթացքում կատարվող կողոպուտները, բռնաբարություններն ու սպանությունները ընդհանուր բնույթ ընդունեցին և վերածվեցին կազմակերպված կողոպուտի և ջարդի...»[7]։

Գ. Չիչերինը 1921 թ. հունվարի 18-ին Գ. Օրջոնիկիձեի միջոցով Անկարայում Սովետական Ռուսաստանի ներկայացուցչին պատվիրում էր հատուկ ուշադրություն դարձնել Հայաստանը աղետալի վիճակից դուրս բերելու խնդրի վրա։ «Թուրքերը,—գրում է Չիչերինը,—բլոկադայի են ենթարկում նրան, կողոպտում են, սովի դատապարտում»[8]։

Սովետական Ռուսաստանի կառավարությունը բազմաթիվ նոտաներով դիմում է թուրքական կառավարությանը, պահանջելով հեռացնել օկուպացիոն զորքերը Հայաստանից՝ համաձայն 1921 թ. մարտի 16-ի պայմանագրի։

Կովկասյան ռազմաճակատի ռազմա-ռևոլյուցիոն խորհրդի անդամ Ռ. Կ. Օրջոնիկիձեին 1921 թ. ապրիլի 6-ին ուղարկած հեռագրում Գ. Չիչերինը հաղորդում է. «Այի Ֆուադը (Մոսկվայում Թուրքիայի դեսպանը—Գ. Գ.) ինձ խոստացել է անհապաղ ազատել Ալեքսանդրապոլը։ Նրան իսկույն ևեթ հաղորդում եմ Կարարեքիրի խուլիգանության մասին, մատնանշելով, որ Թուրքիայի և Սովետական Հայաստանի միջև պատերազմը կնշանակի պատերազմ Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև»։

Թուրքական օկուպացիոն զորքերի հրամանատար Կարարեքիր փաշան դինիկորեն հայտարարեց, թե ինքը չի ցանկանում ազատել Ալեքսանդրապոլը։ Գ. Չիչերինը 1921 թ. ապրիլի 8-ին այդ առթիվ հեռագրել է Գ. Օրջոնիկիձեին. «Մեր անունից կտրուկ բողոք հայտնեցեք Կարարեքիր փաշայի այն հայտարարության դեմ, թե նա չի ցանկանում ազատել Ալեքսանդրապոլը և Ազգային մեծ ժողովի կառավարությանը հաղորդեցեք, որ մենք վճռականապես պնդում ենք, որ թուրքական զորքերն անհապաղ հեռանան Մոսկվայում որոշված սահմաններից այն կողմ։ Մատնանշեցեք այն բանը, թե ինչ ճակատագրական հետևանքներ կարող է ունենալ թուրքական զորքերի ընդհարումը կարմիրբանակային զորամասերի հետ...»[10]։

Միայն Սովետական Ռուսաստանի վճռական քայլերից հետո թուրքական կառավարությունը ստիպված եղավ իր օկուպացիոն զորքերը դուրս բերել 1921 թ. մարտի 16-ի պայմանագրով սահմանված տերիտորիաներից և հրաժարվել պատերազմական գործողությունները վերսկսելու իր մտադրությունից։

Անհրաժեշտ է նշել, որ Քեմալի գլխավորած թուրքական կառավարությունը վերջապես հասկացավ, որ Սովետական Հայաստանը Սովետական Ռուսաստանի անբաժան մասն է, և որ սովետական կառավարության հայտարարությունները այն մասին, թե եղբայրական Սովետական Հայաստանի նկատմամբ յուրաքանչյուր ոտնձգություն դիտվում է որպես ոտնձգություն Սովետական Ռուսաստանի նկատմամբ ոչ թե լոկ դիվանագիտական հայտարարու-

7 «Документы внешней политики СССР», т. III, М., 1959, էջ 455—456։
8 Նույն տեղում, էջ 479։
9 Նույն տեղում, հատ. IV, Մոսկվա, 1960, էջ 50։
10 Նույն տեղում, էջ 55։

թյուններ են, այլ քաղաքականության սկզբունք, որը սրբությամբ պաշտպանում էր Լենինի գլխավորած կառավարությունը։ Այդ պատճառով Քեմալի կառավարությունը ստիպված եղավ վերանայելու իր քաղաքական կուրսը Հայաստանի հարցում։

Լենինի գլխավորած Սովետական Ռուսաստանի կառավարությունը, պաշտպանելով Սովետական Հայաստանի արտաքին-քաղաքական շահերը, միաժամանակ անդուլ հոգատարություն էր ցույց տալիս Հայաստանի քայքայված տնտեսությունը վերականգնելու, հայ ժողովրդին տնտեսական օգնություն կազմակերպելու գործում։

Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ ՌՍՖՍՌ Ժողկոմսովետը որոշում ընդունեց Սովետական Հայաստանին օգնելու համար բաց թողնել 600 հազար ռուբլի (ոսկով), ինչպես նաև մեծ քանակությամբ ապրանքներ, պարենամթերք, վառելանյութ, հացահատիկ և այլն։ Միայն 1921 թ. ընթացքում Սովետական Ռուսաստանը Հայաստանին որպես օգնություն բաց է թողել երեք և կես միլիոն ռուբլի (ոսկով), հսկայական քանակությամբ պարենամթերք, հագուստեղեն, գյուղատնտեսական գործիքներ, արդյունաբերական ապրանքներ և այլն։ Այս օգնության նշանակությունը հատկապես գնահատելի է դառնում, երբ հաշվի ենք առնում Սովետական Ռուսաստանի տնտեսության քայքայված վիճակը։

Մոսկվայում և այլ քաղաքներում ստեղծվեցին Սովետական Հայաստանին օգնություն ցույց տվող կոմիտեներ։ Հայ ժողովրդին տնտեսական լուրջ օգնություն կազմակերպեցին նաև եղբայրական Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիները։

Սովետական Հայաստանում սոցիալիստական շինարարության գործը հաջող կազմակերպելու նպատակով Վ. Ի. Լենինի առաջարկով Հայաստան՝ դեկավար աշխատանքի ուղարկվեց պարտիայի ականավոր գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը, իսկ հետագայում՝ Ս. Լուկաշինը և մի շարք այլ ականավոր գործիչներ։

Բալով Հայաստան, Ալ. Մյասնիկյանը նշանակվում է Հայաստանի ժողկոմսովետի նախագահ և ամբողջովին նվիրվում երկրի ժողովրդական տնտեսության վերականգնմանը։ Նախքան Հայաստան գալը Ալ. Մյասնիկյանը հանդիպում է ունենում Վ. Ի. Լենինի հետ և երկար զրուցում Կովկասում վարվելիք քաղաքականության մասին։

Անդրկովկասի ռեսպուբլիկաներում սոցիալիստական էկոնոմիկայի հիմքերն ստեղծելու գործում ծրագրային փաստաթուղթ է հանդիսանում Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի նամակը «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին», որն իր հետ Կովկաս բերեց Ալ. Մյասնիկյանը։ Ջերմորեն ողջունելով Կովկասի սովետական ռեսպուբլիկաները, Վ. Ի. Լենինը կոմունիստների առաջնահերթ խնդիրներից մեկը համարում էր Կովկասի տարբեր ազգությունների բանվորների և գյուղացիների միջև ազգային խաղաղության ամրապնդումը։ Վ. Ի. Լենինը հաստատ հույս էր հայտնում, որ Կովկասի սովետական ռեսպուբլիկաների «սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[1]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, Երևան, 1953, էջ 402։

Սա Վ. Ի. Լենինի պատվիրանն է Կովկասի բոլոր կոմունիստներին, բոլոր աշխատավորներին։ Այդ սրբազան դաշինքը մեր ուժի ու հզորության աղբյուրն է։ Այն ամրապնդվել ու ամրապնդվում է սովետական իշխանության տարիներին։ Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների դաշինքը նրանց տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման կարևորագույն երաշխիքներից մեկն է։ Ժողովուրդների բարեկամության գաղափարին հավատարիմ մնալը մեր սրբազան պարտքն է։

Վ. Ի. Լենինը հսկայական ջանքեր գործադրեց երկրամասի քայքայված տնտեսությունը վերականգնելու համար։ Նրա անմիջական նախաձեռնությամբ ստեղծվեց Անդրֆեդերացիան։ Անդրկովկասի ռեսպուբլիկաների միավորվելը մեկ ընդհանուր տնտեսական և քաղաքական կենտրոնի շուրջը հսկայական դեր խաղաց Անդրկովկասի ժողովրդական տնտեսության վերականգնման և նրա բազմազգ ժողովուրդների տրադիցիոն բարեկամության ամրապնդման գործում։ Անդրկովկասի միավորված եղբայրական ռեսպուբլիկաները տնտեսական ու քաղաքական սերտ դաշինքի մեջ մտան Սովետական Ռուսաստանի հետ։ Երկրամասի աշխատավորները կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ լծվեցին երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման և վերակառուցման աշխատանքին։ Վ. Ի. Լենինը ուրախանում էր Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի աշխատավորների հաջողություններով, օգնում նրանց ուղղելու թույլ տված սխալները, հայրական հոգատարությամբ հետևում ծավալվող իրադարձություններին։ 1922 թ. դեկտեմբերին, երբ Լենինը ծանր հիվանդ էր և գամված անկողնին, նրան այցի է գալիս Ալ. Մյասնիկյանը։ Նրանց զրույցը ամբողջությամբ վերաբերում էր Հայաստանին և հայ ժողովրդին։ «Վ. Ի. Լենինը հարցնում էր,—գրում է Ալ. Մյասնիկյանը,—թե արդյոք ոտքի կանգնել է Հայաստանը, ինչ դրության մեջ է այնտեղ բամբակը, ոռոգումը, պարենամթերքը, բավականաչափ և մոտ է արդյոք ազգային Կարմիր Բանակը, չեն նեղացնում արդյոք «մանր մարդկանց», ագիտացիա չի մղվում արդյոք «ռուսական սվիններին» մասին և այլն»։

Հայաստանի կոմունիստական պարտիան, ամբողջ հայ ժողովուրդը երախտագիտությամբ և ակնածանքով են հիշում մեծ Լենինին, որի անվան հետ է կապված մեր ժողովրդի վերածնունդը։

Դարեր շարունակ իր պետականն ու քաղաքական ինքնուրույնությունը կորցրած, ֆիզիկական բնաջնջման ահավոր վտանգի առաջ կանգնած հայ ժողովուրդը իր ազգային վերածննդի շրջանը թևակոխեց միայն սովետական իշխանության և կոմունիստական պարտիայի ջանքերի շնորհիվ։

Անգլիացի քաղաքական գործիչ Հարոլդ Բուքստոնը, որը առիթ է ունեցել Անդրկովկասում լինել 1919 թ. և ապա 1925 թ. և ծանոթ է հայ ժողովրդի պատմությանը, Լոնդոնում հրատարակած իր «Անդրկովկասը» աշխատության մեջ ճիշտ կերպով նկատել է, որ Սովետական Ռուսաստանը «ավելի շատ բան է արել հայերի համար, քան բոլոր արևմտյան տերությունները միասին վերցրած»։

Հոկտեմբերյան ռևոլյուցիան ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների համար ապահովեց ազգային իսկական անկախություն, քաղաքական և տնտեսական հավասարություն։ Նախկինում տնտեսապես հետամնաց ազգերի առավել արագ զարգացման հետևանքով այդ ժողովուրդները հսկայական թռիչք են կատարել

հետամնացությունից դեպի արդյունաբերական ծաղկումը, արագորեն բարձրացրել են իրենց էկոնոմիկան, կուլտուրան և բարեկեցությունը։

Սովետական իշխանության տարիներին լիովին կերպարանափոխվել է նաև մեր ռեսպուբլիկան։ Աննախընթաց վերելք են ապրում Սովետական Հայաստանի արդյունաբերությունը, գիտությունը և կուլտուրան։ Մեր ռեսպուբլիկայում արտադրվող արդյունաբերական ապրանքների բազմաթիվ տեսակները (մամլիչ մեքենաներ, կոմպրեսորներ, տրանսֆորմատորներ, գեներատորներ և այլն) լայն ճանաչում են գտել ոչ միայն եղբայրական ռեսպուբլիկաներում, այլև արտասահմանյան բազմաթիվ երկրներում։

Արդյունաբերության զարգացմանը զուգընթաց ծաղկում են Սովետական Հայաստանի քաղաքներն ու գյուղերը։ Սովետական Հայաստանի քաղաքները հազարամյա հայ ժողովրդի զարթոնքի հոյակապ կոթողներն են դարձել, նրանք խորհրդանշում են մեր ժողովրդի վերածնունդը։

Սովետական իշխանության տարիներին անճանաչելիորեն փոխվել է նաև հայ գյուղի պատկերը։ Ձեթի ճրագին փոխարինեցին Իլյիչի լամպերը, արորին ու գութանին՝ գյուղատնտեսական նորագույն տեխնիկան։ Գյուղերում կառուցվել ու կառուցվում են տասնյակ հազարավոր բարեկեցիկ տներ, ակումբներ, դպրոցներ, հիվանդանոցներ։ Գյուղը էլեկտրիֆիկացվել է, ռադիոն, հեռուստատեսությունը, կինոն, թատրոնը մտել են գյուղացու կենցաղի մեջ։

Սովետական Հայաստանը աշխարհին զարմացնում է իր գիտության ու կուլտուրայի զարգացման մակարդակով։ Եթե նախասովետական Հայաստանում խոսք անգամ չէր կարող լինել գիտության որևէ օջախի մասին և նրա զավակներից հատուկենտ երջանիկներին էր հաջողվում Հայաստանի սահմաններից դուրս կրթություն ստանալ, ապա այժմ մեր ռեսպուբլիկան պատված է բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատությունների խիտ ցանցով։ Գիտահետազոտական հիմնարկների թիվը այժմ հասնում է 85-ի, որտեղ աշխատում են ավելի քան 6500 գիտնականներ։

Աննախընթաց կերպով զարգացել է հայ ժողովրդի հոգևոր մշակույթը, որը իր պատվավոր տեղն ունի ոչ միայն սոցիալիստական ազգերի, այլև համաշխարհային քաղաքակրթության մեջ։

Կոմունիստական պարտիան մեր ժողովրդին ճիշտ ուղի է դուրս բերել։ Նա սովետական մեր հզոր հայրենիքի բազմազգ ժողովուրդներին համախմբել է մեկ ընդհանուր եղբայրական մեծ ընտանիքում։ Վերածնված մեր հայրենիքը մագնիսի նման ձգում և իր գիրկն է հավաքում աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի զավակներին։ Սովետական Հայաստանը լենինյան ազգային քաղաքականության, մեծ Հոկտեմբերի գաղափարների կենսահաստատության վառ օրինակ է։

ВОЗРОЖДЕНИЕ АРМЯНСКОГО НАРОДА

(К 45-летию установления Советской власти в Армении)

Проф. Г. А. ГАЛОЯН

(Р е з ю м е)

Победа Великой Октябрьской социалистической революции в России ознаменовала коренной перелом в истории человечества. С победой Октябрьской революции на путь национального обновления вместе с другими народами России встал также армянский народ.

В тяжелые дни турецкого нашествия в Армению (1918 г.) только Советская Россия выступила с решительным протестом против захватчиков, против насилий по отношению к мирному населению. За годы своего господства дашнаки и турецкие оккупанты привели страну к экономической, политической и военной катастрофе. Борьба армянского народа против националистической контрреволюции и иностранных империалистов нашла полное понимание и поддержку в Советской России. И когда осенью 1920 г. вспыхнула спровоцированная империалистами Антанты армяно-турецкая война и турецкие завоеватели снова вторглись в пределы Армении, поставив армянский народ перед опасностью полного физического истребления, единственной страной, которая защищала интересы трудового армянского народа, была Советская Россия. 29 ноября 1920 г. Советская власть победила в Армении, что явилось поворотным пунктом в истории армянского народа.

В условиях Советской власти армянский народ достиг поистине грандиозных успехов в развитии народного хозяйства, культуры, науки и техники, в революционном преобразовании быта и жизни трудящихся. Возрожденная Армения—яркий пример воплощения мудрой ленинской национальной политики КПСС, подлинный триумф идей Великого Октября.